սերովբէների իջումն երգելով։ Երզնկացին բացատրում է տեղի անունն այս խօսքերով.

Որում ցանկացան զօրքն սրովբէից,
Բերանք հրեղէնք յերկնից ի յերկիս
Խոնարհեալ ի տես մարմնով ճգնողին.
Որ և պատիւ տեղւոյն անուանմանն
կոչի։

Բ.

Այսպիսի փառաց պսակ հիւսելով ազգիս լուսաւորութեան քրտնավաստակ աշխատաւորի ճակատին, մեր նախնիք երկնային, հրեշտակական և աստուածամերձ յատկութիւն վերագրեցին նորան, և այսպիսով անստուգութեան թանձր քօղի տակ ծածկուած մնաց Ս. Լուսաւորչի մահուան և թաղման հանգամանքն աւանդութեան մէջ։ Զենք կարող սակայն հաւաստի չհամարել Փաւստոս Բիւզանդի ցուցումը, որ պարզապէս նշանակումէ, թէ Ս. Գրիգոր ամփոփուեցաւ Թորդան աւանումն, որ Դարանաղեաց գաւառի մէջն է Սեպուհի ստորոտումն։ Փաւստոս ոչ միայն առանձնապէս Ս. Լուսաւորչի գերեզմանը դընում է այն տեղ, այլ և պատմելով նորա որդու Ս. Վրթանէսի և թոռան Ս. Յուսիկի մահն, ասում